



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Սյունիքի մարզ, 3301, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Հեռ.՝ +374 60 517822, +374 285 44291, Էլ.փոստ՝ syunik@mta.gov.am

« »

2024թ., №

Գորիս համայնքի ղեկավար Ա.Առուշանյանին

Հարգելի պարոն Առուշանյան

Համաձայն ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի Ձեզ ենք ներկայացնում ՀՀ վարչապետի 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված «ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի» **26.01.2024թ. N2/փ-36 դրական** եզրակացությունը՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում (Գորիս բնակավայր) առանձին հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ՝ որով նախատեսվում է պաշտպանական կարիքների համար, հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրել, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 3.59836 հեկտար վարելահող (կադաստրային ծածկագրեր՝ 09-003-0331-0001-ից):

Առաջարկում ենք Ձեզ կազմել և Գորիս համայնքի ավագանու առաջիկա նիստի հաստատմանը ներկայացնել «Գորիս համայնքի Գորիս քաղաքի տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություն կատարելու և հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագիծ (հողաշինարարական գործի գծագրական մասի հավելվածի հետ միասին):

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Հարգանքով՝

Ռ. Ղուկասյան

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ